«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

_____ Հ. Հովհաննիսյան

19 հունվարի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անի Զոհրաբի Գրիգորյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» ամբիոնի 16.01.2024 թ.-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 5):

Քննարկմանը մասնակցում էին՝

«Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ., Գ. Է. Սահակյանը, տ.գ.դ. պրոֆ. Վ. Բոստանջյանը, տ.գ.թ. դոցնետ Թ. Հովակիմյանը, տ.գ.թ. դոցնետ Գ. Մնացականյանը, տ.գ.թ. ասիստենտ Կ. Սահակյանը, տ.գ.թ. դոցենտ Գ. Կիրակոսյանը, տ.գ.թ. ասիստենտ Հ. Ղահրամանյանը, տ.գ.թ. ասիստենտ Հ. Դովլաթյանը, տ.գ.թ. ասիստենտ Ս. Էլարյանը, տ.գ.թ. ասիստենտ Լ. Կարապետյանը, Ա. Սարգսյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անի Զոհրաբի Գրիգորյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավման հիմնահարցերի քննարկմանը և ուղիների բացահայտմանը:

Զարգացող երկրներն անհամեմատ ավելի հաճախակի են դիմում արտաքին փոխառությունների ներգրավմանը: Բնականաբար, արտաքին վարկերի արդյունավետ օգտագործումը նպաստող ազդեցություն է ունենում երկրի տնտեսական առաջընթացի ապահովման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար:

Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի փոխառնչությունները գնալով ավելի առօրեական են դառնում, քանի որ արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարումը կարևորվում է ոչ միայն ազգային տնտեսության հեռանկարային զարգացման, այլև՝ գլոբալացման արդի մարտահրավերների դիմակայման և համաշխարհային տնտեսական դիրքերի պահպանման տեսանկյունից:

Արտաքին պարտքի խելամիտ կառավարման հիմնահարցը հատկապես կարևորվում է ճգնաժամային իրավիճակներում:

ՀՀ պետական պարտքի բեռի նվազեցման ռազմավարական թիրախը ներքին կապիտալի շուկայի ընդլայնման քաղաքականությունն է: Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը ձգտում է պարտքի կառուցվածքում մեծացնել ներքին պարտքի տեսակարար կշիռը՝ նվազեցնելով տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկը, ինչը շոշափելի է ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման տեսանկյունից:

Նշված հիմնախնդիրների գիտականորեն հետազոտմանը և լուծման ուրվագծմանն ուղղված Անի Զոհրաբի Գրիգորյանի ատենախոսությունը համարում ենք արդիական, իսկ արդյունքները՝ կարևոր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է վերլուծել և գնահատել ՀՀ-ում արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետությունը և առաջարկել ներկա աշխարհաքաղաքական իրավիճակին համահունչ կառավարման բարելավման ուղիներ: Ատենախոսության նպատակով պայմանավորված առաջադրվել են ներքոհիշյալ խնդիրները՝

• ուսումնասիրել ՀՀ պետական պարտքի կառավարման ռազմավարությունը՝ վեր հանելով շոշափելի ռիսկերը,

• մշակել պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի տեսակարար կշռի նվազեցման և ներքին փոխառու միջոցների ավելացման հիմնավորման տեսանկյունից գործոնային վերլուծության մոտեցում,

• հիմնավորել և առաջարկել ՀՀ պետական պարտքի բեռի գնահատման հայեցակարգում առավել նպատակահարմար միջազգային խոշորագույն հետազոտական կառուցների կողմից մշակված մոտեցումների կիրառման նպատակահարմարությունը,

• գնահատել ՀՀ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի ցուցանիշների հարաբերակցությունը կորելացիոն մեթոդով,

• գնահատել ՀՀ միջին ամսական աշխատավարձի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների հարաբերակցությունը կորելացիոն և ռեգրեսիոն մեթոդներով,

• իրականացնել ՀՀ-ում տնտեսական ակտիվության, արժութային փոխարժեքի (դրամ/1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք) և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև բազմակի գծային ռեգրեսիոն և կորելացիոն գնահատումներ՝ արդյունքները ստուգելով «Shapiro–Wilk» թեստի միջոցով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

• Կառուցվել է արտաքին փոխառու միջոցներից կախվածության թուլացման առանցքային գործոններ դիտարկված իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոսմերի փոխկապակցության գնահատման մոտեցում, որի միջոցով հիմնավորվել է ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի տեսակարար կշռի նվազեցման նպատակով ներքին փոխառու միջոցներին ապավինող քաղաքականության արդյունավետությունը:

• Մշակվել է ՀՀ արտաքին պահուստների օպտիմալ մակարդակի գնահատման համալիր մոտեցում, որի հիմքում դրվել են միջազգային

պրակտիկայում կիրառվող «Ռեդի»-ի ու «Գվիդոտի»-ի չափանիշները, որի արդյունքում հիմնավորվել է անկանխատեսելի շոկերի ի հայտ գալու դեպքում արտաքին պահուստներով պարտքի սպասարկման բավարար ներուժը:

- Առաջարկվել է ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման մոտեցում՝ հիմնվելով ԱՄՀ և ՀԲ կողմից պարտապան երկրների դասակարգման նպատակով կիրառվող արտաքին պարտքի և արտահանման տարեկան մեծության գործակիցների հարաբերակցության գնահատման մեթոդաբանական լուծումների վրա:
- Կառուցվել են ՀՀ տնտեսական ակտիվության, արտարժութային փոխարժեքի (դրամ/1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեք) և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև կորելացիոն և բազմակի գծային ռեգրեսիոն վերլուծության մոտեցումներ, որոնց արդյունքների կիրառումը կնպաստի ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավմանը:
- Հիմնավորվել է ՀՀ-ում պարտքի կառավարման գործակալության գործարկման անհրաժեշտությունը՝ որպես ներգրավված արտաքին փոխառու միջոցների շնորհիվ ապահովված տնտեսական աճի չափելիության գնահատման մեխանիզմ և առաջարկվել է ներգրավված միջոցների նկատմամբ հաշվետվողականության, թափանցիկության, հասցեականության և արդյունավետության ապահովման մոտեցում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հետազոտության օբյեկտ է ճանաչվել ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ոլորտը, իսկ առարկա՝ ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավման հիմնահարցերը:

Ատենախոսության ընթացքում կատարված գիտամեթոդաբանական ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից բխող եզրահանգումներն ու մշակված մոտեցումներն ունեն և՛ տնտեսական, և՛ գործնական նշանակություն:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պարտքի կառավարման և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներում՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև պետական պարտքի և ֆինանսական զարգացման հետազոտություններով զբաղվող մասնագետների կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 137 էջից՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքները և նորույթը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտության առաջին՝ **«Արտաքին պետական պարտքի կառավարման տեսամեթոդաբանական հիմքերը, արտերկրյա փորձը եվ կառավարման օրենսդրահիրավական հիմքերը»** գլխում ներկայացվել են պարտքային հիմնախնդրի և արտաքին պետական պարտքի տնտեսագիտական ընկալումները, պարտքի առաջացման պատճառները և ֆինանսավորման համաշխարհային պրակտիկան, արտաքին պետական պարտքի կառավարման օրենսդրահիրավական հիմքերի համեմատական վերլուծությունը ՀՀ-ում և առևտրային գործընկեր երկրներում:

Առաջին ենթագլխում քննարկվել են պարտքային հիմնախնդրի վերաբերյալ տարբեր ժամանակաշրջանի տեսաբանների մոտեցումները, ուսումնասիրվել են դեֆոլտների պատմություններ, որոնք փաստել են, որ նման հիմնախնդրի առաջ կանգնած երկրների համար կապիտալի առատ ներհոսքն ավարտվել է անվճարունակությամբ:

Սույն ենթագլխում՝ ատենախոսը, վերոնշյալ քննարկումների համատեքստում անդրադարձել է վերջին տարիներին ՀՀ պետական պարտքի կառավարման ուսումնասիրությանը:

Ատենախոսը եզրակացրել է, որ արտաքին պետական պարտքի կառավարման վերաբերյալ եղած գիտական հրապարակումների գերակշռող մեծամասնությունն անդրադառնում է վերջինիս ուղղված քանակական վերլուծություններին: Թեև նման վերլուծությունների արդյուքները նշմարում են քաղաքականություն մշակողների և իրականացնողների կողմից ապագայում վարվող պարտքային քաղաքականության հնարավոր սցենարները, ինչպես նաև դրանց հետ կապված հնարավոր խոչընդոտները, այնուամենայնիվ, ատենախոսի կողմից ընդգծվել է որակական վերլուծությունների անհրաժեշտությունը՝ չափելի դարձնելու ներգրավված պարտքային միջոցների ապահոված արդյունքայնությունը, ինչպես նաև մատնանշելու վերջիններիս օգտագործման առավել արդյունավետ ուղղությունները:

Երկրորդ ենթագլխում ատենախոսն ուսումնասիրել է պարտքային ճգնաժամեր հաղթահարած երկրների փորձը, ինչպիսիք են Արգենտինան (1998-2002թթ.), Հունգարիան (2008-2009թթ.), Հունաստանը (2010-2018թթ.): Այս երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում ատենախոսը, եզրակացրել է, որ երեք դեպքում էլ կարմիր թելի նման անցնում է կառավարության պարտքի բեռի ավելացմանը զուգահեռ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում դրա սխալ տեղաբաշխման խնդիրը:

Ատենախոսը՝ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից միջազգային պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում, կարևորել է պարտքի կառավարման «գրասենյակի» կամ «գործակալական ինստիտուտի» մեխանիզմը՝ իբրև պարտքի կառավարման կոորդինացված կառույց: Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունները թույլ են տվել նշելու, որ պարտքի կառավարման առանձին գործակալություններ ունեն հիմնականում զարգացած երկրները, որոնք ունեն արդյունավետորեն գործող ներքին կապիտալի շուկաներ: Այս համատեքստում, ատենախոսը ուշագրավ է համարել ՀՀ-ում կապիտալի շուկայի վերջին տարիների արագորեն ընդլայնման միտումները:

Հիմք ընդունելով պարտքի կառավարման արտերկրյա փորձի արդյունքները՝ ձևակերպվել է հինգերորդ գիտական նորույթը:

Երրորդ ենթագլխում ուսումնասիրվել են ՀՀ առևտրային գործընկերներ ՌԴ-ի և Վրաստանի պետական պարտքի կառավարման ռազմավարական ուղղությունները, որտեղ նկատվել են որոշակի ընդհանրություններ ՀՀ և Վրաստանի պետական պարտքի կառավարման ներկա ռազմավարությունների հետ՝ հաշվի առնելով երկու պետությունների վերջին տարիներին արձանագրած համանման մակրոտնտեսական ցուցանիշները և պետական պարտքի կառուցվածքային առանձնահատկությունները (մասնավորապես՝ պարտքի կառուցվածքի, տնտեսական աճի մասով), սակայն ՌԴ-ի պարագայում պատկերն այլ է: Ատենախոսը՝ ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավման տեսանկյունից, կարևորել է պարտքի սպասարկմանը և մարմանն ուղղվող ծախսերի անվտանգային սահմանագծի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը (ինչպես օրինակ գործընկեր ՌԴ-ում՝ սահմանված է 2-3 տոսկոս), ինչը հնարավորություն կտա ավելի չափելի դարձնել ներգրավվող պարտքային բեռի սպասարկման պոտենցիալը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արտաքին պետական պարտքի կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությում»** գլխում քննարկվել են ՀՀ-ում արտաքին պետական պարտքի ձևավորման, գնահատման և կառավարման մոտեցումները, իրականացվել է տնտեսական աճի և կառավարության պարտքի ցուցանիշների համեմատական վերլուծությունը, ուսումնասիրվել է ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ռիսկերը և արտաքին պարտավորությունների կատարման առանձնահատկությունները միջնաժամկետ հատվածում:

Այս գլխում ատենախոսը ուսումնասիրել է ՀՀ արտաքին պետական պարտքի վերջին տարիներին դրսևորած վարքագիծը և եզրակացրել, որ ըստ ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքների, պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը, և կարևորել է ՀՀ-ում պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացման առաջնահերթությունը և

ներքին շուկայից փոխառությունների ներգրավման ծավալի մեծացման հաշվին դրամային պարտքի մասնաբաժնի ավելացման անհրաժեշտությունը:

Կատարված ուսումնասիրությունները հիմք են հանդիսացել ատենախոսության հաջորդ գլխում կատարվող վերլուծությունների համար:

Սույն գլխում գիտական նորույթ չի ձևակերպվել:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման մոտեցումներն ու դրանց լուծման ուղիները»** գլխում քննարկվել են ՀՀ պետական պարտքի կառավարման խնդիրները և լուծումները կառուցվածքային առանձնահատկությունների համատեքստում, ՀՀ արտաքին պահուստների օպտիմալ մակարդակի և պետական պարտքի սպասարկման ներուժի գնահատման մոտեցումը, ինչպես նաև արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման բարելավման ուղիները:

Առաջին ենթագլխում գնահատվել է ՀՀ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի, պետական պարտատոմսերի միջև գոյություն ունեցող կապը՝ կորելացիոն մեթոդով և Սփիրմանի գործակցով: Ատենախոսը գնահատման արդյունքները ստուգել է Շապիրո-Ուիլք թեստի միջոցով:

Սույն ենթագլխում ատենախոսը ռեգրեսիոն մեթոդով գնահատել է նաև ՀՀ ամսական միջին աշխատավարձի, որպես առաջնային ազդեցության փոփոխականներ դիտարկված պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև փոխկապվածությունը և եզրակացրել է, որ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև գոյություն ունի դրական կապ, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև գնահատման արդյունքները հիմք են հանդիսացել նշելու, որ ապագա հեռանկարում իրական աշխատավարձի բարձրացումը կարող է նպաստել ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքից կախվածության թուլացմանը:

Ատենախոսի կողմից կարևորվել է նաև արտաքին պետական պարտքի նվազման ուղղությամբ պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական

տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի փոփոխության դրական ազդեցությունը:

Այս ենթագլխում հիմնավորվել է առաջին գիտական նորույթը:

Երկրորդ ենթագլխում ուսումնասիրվել է ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստների բավարարելիության մակարդակը, գնահատվել է ՀՀ միջազգային պահուստների համալրվածությունն միջազգային պրակտիկայում կիրառվող «Ռեդի»-ի չափանիշով:

Ատենախոսը գնահատել է նաև ՀՀ միջազգային պահուստների և արտաքին պարտքի սպասարկման ծավալների հարաբերակցությունը՝ «Գվիդոտի»-ի կանոնի համաձայն:

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները՝ ատենախոսը եզրակացրել է, որ ՀՀ արտաքին պահուստների ներկա մակարդակը համարվում է բավարար՝ կոլապսային իրավիճակների ի հայտ գալու պարագայում:

Այս ենթագլխում է հիմնավորվել երկրորդ գիտական նորույթը:

Երրորդ ենթագլխում ատենախոսը գնահատել է ՀՀ պարտքի կայունության գործակիցը հիմնված՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից պարտապան երկրների դասակարգման նպատակով կիրառվող արտաքին պարտքի և արտահանման տարեկան մեծության հարաբերակցության վրա:

Ատենախոսը եզրակացրել է, որ ըստ Համաշխարհային բանկի չափումների՝ այն է. ≥ 220– կրիտիկական; -132-220 – ընդունելի; ≤ 132 – ցածր, պարտքային գործակիցը վերլուծվող ժամանակաշրջանում եղել է «ընդունելի» միջակայքում, բացառությամբ՝ 2010, 2016, 2021 թվականների՝ գտնվելով «կրիտիկական» միջակայքում:

Սույն ենթագլխում իրականացվել են գնահատումներ ՀՀ-ում տնտեսական ակտիվության, արտարժութային փոխարժեքի (ԱՄՆ դոլար) և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև:

Ատենախոսը եզրակացրել է, որ ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի և արտաքին պարտքի ցուցանիշների միջև կապը դիտարկվող ժամանակահատվածում կորելացիայի և ռեգրեսիայի գործակիցներով գնահատման

արդյունքներում թույլ է, ասարտարժութային փոխարժեքի (ԱՄՆ դոլարի) և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև կորելացիոն և ռեգրեսիոն գործակիցներով գնահատման արդյունքներում կապը նկատելի է, իսկ ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի, դոլարի փոխարժեքի տատանումները հանգեցնում են ՀՀ արտաքին պետական պարտքի համապատասխանաբար 0,1 և 0,7 տոկոսի փոփոխության:

Այս ենթագլխում է ձևակերպվել է երրորդ և չորրորդ գիտական նորույթները:

«ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում ամփոփվել են հետազոտության ուսումնասիրություններից և գնահատականներից բխող հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակը արտաքին պարտքի կառավարման բարելավման նպատակով առաջարկում է օրենսդրորեն ամրագրել մի շարք շեմային ցուցանիշներ, ինչը, ըստ նրա, կապահովի պարտքի սպասարկմանը և մարմանն ուղղվող ծախսերի անվտանգային մակարդակը: Մասնակիորեն համաձայն լինելով առաջարկվող մոտեցման հետ, միաժամանակ, գտնում ենք, որ այդ դեպքում որոշակիորեն կնվազի կառավարության կողմից պարտքի կառավարմանն ուղղված քաղաքականության ճկունությունը: Նման հետևանքների հնարավորությունն աշխատանքում չի արժանացել պատշաճ ուշադրության:
2. Կարևորելով պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի նվազեցման անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ, հեղինակը չի ներկայացնում այն նախընտրելի միջակայքը, որն ընդունելի կարող է լինել Հայաստանի Հանրապետության համար՝ ելնելով վերջինիս տնտեսական, ֆինանսական և սոցիալական առանձնահատկություններից: Կարծում ենք, այդ ուղղությամբ հեղինակը վերլուծությունները պետք է կրեին առավել խորքային բնույթ, ինչն, անշուշտ, կբարձրացներ աշխատանքի գիտագործնական նշանակությունը:

3. Պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի մասնաբաժնի ավելացումը հեղինակի կողմից ներկայացվել է հիմնականում դրա առավելությունների տեսանկյունից: Մինչդեռ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքն ունեն իրենց առավելությունները և թերությունները: Այս տեսանկյունից, ցանկալի կլիներ, որ հեղինակի կողմից առավել խորությամբ ներկայացվեին նաև այն ռիսկերը, որոնք կարող են ծագել ներքին պարտքի ավելացմամբ պայմանավորված:
4. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ պետական պարտքի կառավարումը կարևոր է, քանի որ պետական պարտքի չափը և ժամկետայնությունը ազդում են ապագա հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության որոշումների վրա: Համաձայն լինելով նման տեսակետի հետ, միաժամանակ, կարծում ենք, որ հեղինակն առավել խորությամբ պետք է դիտարկեր տվյալ ազդեցության ձևերն ու սահմանները:
5. Աշխատանքում հեղինակը ուշագրավ հետազոտություն է իրականացրել ներքին փոխառու միջոցների ավելացման համար անհրաժեշտ պայմանների և նախադրյալների բացահայտման և դրանց որակական ու քանակական գնահատման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, դրանց իրացման ուղիների և եղանակների վերաբերյալ վերլուծություններն աչքի չեն ընկնում իրենց խորությամբ:
6. Ատենախոսությունում հեղինակը նշում է, որ ՀՀ պետական պարտքի կառավարելիության ապահովման համար պարտքի կառավարման հիմքում պետք է դրվի ոչ թե պարտքի մեծության կամ ծավալների շարունակական աճի կրճատման խնդիր, այլ վերջինիս օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակադրում, ինչը կնպաստի տնտեսական աճին՝ հնարավորինս չեզոքացնելով պետական պարտքի սպասարկման ու մարման ռիսկերը: Համաձայն լինելով այդ մոտեցման հետ, կարծում ենք, որ այդ համատեքստում անհրաժեշտ էր նաև ներկայացնել փոխառու միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված որոշակի լուծումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Անի Զոհրաբի Գրիգորյանի՝ **«ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները»** թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման և պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի տեսակարար կշռի նվազեցման տեսանկյունից ներքին պարտքի մասնաբաժնի ավելացման թիրախային քաղաքականության իրականացման վերաբերյալ տեսական և գործնական կարևորություն ունեցող հարցադրումներ: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ, որոնք կարող են նպաստել ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարմանը:

Արտաքին պետական պարտքի բեռի գնահատմանը նվիրված հետազոտությունը կատարվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսներ ամբիոնում: Հետազոտության հիմնական արդյունքները ներկայացվել են ՀՀ ՊԿԱ «Երիտասարդության քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրները ՀՀ-ում» հանրապետական, «Գլաձոր-30», «Արդի գիտական հետազոտությունները ժամանակակից աշխարհում» (Ուկրաինա), «Գիտությունը և կրթությունը XXI դարում» (Ղազախստան), ՀՀ ԳԱԱ «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 13 (տասներեք) գիտական հոդվածներում, որից ինը հոդված ՀՀ ԲԿԳԿ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականներում, երեք հոդված միջազգայնորեն ինդեքսավորված ամսագրերում, մեկ հոդված “Web of Science” գիտաչափական շտեմարանում ընդգրկված պարբերականում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության

բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Այսպիսով, **Անի Զոհրաբի Գրիգորյանի՝ «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչի ժ/պ,
տ.գ.թ.՝ Գ. Է. Սահակյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Ֆինանսահաշվային» ամբիոնի պրոֆեսոր,
տ.գ.դ.՝ Վ. Բ. Բոստանջյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Ֆինանսահաշվային» ամբիոնի դեցենտ,
տ.գ.թ.՝ Գ. Ֆ. Կիրակոսյան

Գ.Սահակյանի, Վ.Բոստանջյանի և Գ.Կիրակոսյանի ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Վ. Հովհաննիսյան